

Սկզբներուն պարարտութիւնը աս կերպով զատելով կը գործածեն, ինչպէս որ վերը ըսինք. և կամ տակաւներուն մէջ կը լեցնեն և օճառագործներուն կը ծախեն, նոյնպէս կը գործածուի հողաթափի ու կառաձիգ երկվարաց կաշմածներուն կաշիները կակղցնելու. իսկ երբ վերի ըրած գործողութեանդ ատեն կամաց կամաց եփ մը տաս, այնպէս որ խալկինիդ մէջի ջուրը շոգիանայ, ան ատեն պարարտութիւնը սեւագոյն կ'ըլլայ, ու խիստ յարմար սայլերուն ու արօրներուն լիսեռները, պտուտակներ, առանցքներ, ծղիւններ և մամուլներ օծանելու, զանոնք դիւրաշըջուն ընելու համար:

Սերիշ տեսակ ոսկերք ալ կան, որոնք առանց պարարտութիւնը հանելու կը գործածուին, որ են ասոնք. կովու գըլխուն ոսկըր, եղջերաց ներքին ոսկրու տմասերը. նոյնպէս սմբակները, ոչխարներուն ուսին բարակ ու տափակ ոսկերտիքը: Եւ ամէն ոսկորները, նոյնպէս ոչխարներուն սրունից ոսկորները, ու

րոնք շատ նեղ ըլլալով՝ սեղանատախտակներու գործածութեանը չեն ծառայեր, և ուրիշ մանր կտորուանքը շահաւոր կերպով մածոյծ ու սոսինձ շինողներուն կրնան ծախուիլ: Արոնց սոսնձեղէն մասունքը հանելէն վերջը՝ պարզ ոսկրոտիքը անուշադրի գործարաններու կը ծախեն և կամ խոշորկեկ փոշի դարձնելով՝ երկրի լաւ պարարտութիւն կ'ըլլայ: Եւ երբ դիւրութեամբ փոշիացնելու համար երկու իրեք մը խոշորտի խտութեամբ շոգոյ տակ դնելու է զանոնք երկու ժամի չափ, որպէս զի լաւ մը կակղանան:

Սկզբները փոշիացնելուն դիւրին կերպըն է կարծր փայտէ կոճղ մը առնուլ, որուն երեսն սուր երկվէ ատամներ ըլլան, ու անով զարնել ու փշրել ոսկորները: Եւ զիստ աս բանիս համար երկու ատամնաւոր գլաններ կը գործածեն:

Եւ ըսած կերպովս ոսկորները մանրէլէն ետքը, ուրիշ աւելի մանր ատամներով գործիքի մը տակ պէտք է փշրել, որպէս զի աւելի մանրամաղ ըլլայ փոշին:

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ՍԿԶԲՈՒՆՔ ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

Դաս ի. Օրենք բաղկացութեան մարմնոց և բնաբուսական գոգաւայր:

Եւ զարմանալի յատկութիւնս է թէ միայն ինչուան հիմա դրած եօթը պարզ մարմիններն ունին, հապա նաև այլ ամենայն ինչուան հիմա ճանչցուած տարերքը: Եւ որպէս զի աս ընդհանուր օրինաց ստուգութիւնը իմացութիւննայմէ մէկ քանիին բաղկացութիւններն ալ առաջ բերենք:

Այլ երբ ըսինք որ մահաճին 175 կշռական չափը

100	չափ թթուածնով կ'ըլլայ	Եւ խտութիւն մահաճին.
200		Եւ խտութիւն մահաճին.
300		Եւ խտութիւն մահաճին.
400		Եւ խտութիւն մահաճին.
500		Եւ խտութիւն մահաճին.

Մահաճին ջրածնի հետ մէկ բաղկացութիւնը միայն կը ճանչնանք՝ որ մասնաւոր բաւով Աւշի կ'ըսուի. ասոր բաղկացութիւնը մահաճին 175 չափին վերածելով է Մահաճին 175,0

$$\text{Ջրածին} \quad 37,5 = 3 \times 12,5 \quad (\text{որ է ըսել 3 զուգաչափ ջրածնի})$$

$$\underline{212,5}$$

